

ՎԱԽՃ. 9 ԱՊՐ. 1909:

398. Երրորդին՝ 3 տող.

ՄԱՐԳԱՐԻՏ ՊՕՂՈՍԵԱՆ/ ՂՈՒԿԱՍԵԱՆՑ./ ԾՆ. 14 ՅՈՒԼԻՍԻ 1893/ ՎԱԽՃ. 12 ՍԵՊՏ. 1913:

Վիժաղրական արշավախումբը շրջագայեց նաև Բաաուրինյան (Գրաֆսկոյե) և Լիվադյան դերեզմանոցներում: Հնագույն տապանադրեր սյսաեղ չկան:

ԱԼՈՒԾՏԱ

399. Առողջարան «Ուոյոս»: Պուրակի վարընթաց աստիճանների ապիարակում.

Տուպանաքար սպիտակ մարմարից, ըուսական դեղեցիկ դարձաքանդակներով, ուղղահայաց վիճակում. դիմացը՝ հողի մեջ դրված մարմարակերտ սպիտակավուն վաննա, որի մեջ ջուրը լցվել է տապանաքարի կենտրոնում փորված անցքի ծորակից: Արձանադրությունը, 5 առդ, փորագրված է միջնամասում.

ՇԻՐԻՄՍ Է ԽՈՂԵՄԱԶԱՐԴ ԱՆԱԲԻՔԷԻՆ, / ՈՐ ԱՆԽԵԴԱՑ ԴՈՒՍՏՐ ՄԼԱՂՏԼԵ/ՍԻ ԿԱՐԱՊԵՏԻՆ, / ԵՒ ԿԻՆ ՂԱԼԱԴԱԼԸ ՕՂԼՈՒ ՅՕՀԱՆԵՍԻՆ, / ԹԷ ՀԱՆԴԻՊԻՔ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՍ Ը [Ե.Դ.] ՀԱԻՐՄԵՐԻՆ:/ ԹՎԻՆ [Թ]. ԴԵԿՏ./ ԴԱ. (21):

Ժանոթ. Տապանքարի կենտրոնում ցեմենտով պիրկ սվաղ է, որ չկարողացանք պոկել: Թերևս, այսպեղ է եղել թվականը, սակայն կարելի է նաև կարծել, որ կցադրով դրված ԹՎԻՆ/ տառակալակցությունը կարող էր նշանակել Ռ (հաղար), ուստի $1000 + 551 = 1551$: Ուրեմն՝ կոթողը պատրաստվել է 1551 թ. դեկտեմբերի 21-ին: Նման մոտիվներով տապանաքարեր և խաչքարեր առավել շատ կան 17-18-րդ դարերից:

ԿԻԵՎ

Արևելյան քոչվորական ցեղախմբերի ավերիչ ասպատակությունների պատճառով մայր Հայրենիքից արտադաղթած հայ ընտանիքների մի մասը հանդրվան էր դառնում նաև Հին Ռուսիայի մայրաքաղաքում՝ Կիևում, որտեղ աստիճանարար ներդրավել էր քաղաքական-անասական կյանքի ոլորտը: Դեռևս Կիև-Պեչորյան մայրավանքի «Հարանց վարքում»՝ «Պատերիկում», հիշատակվում է հմուտ մի Հայ ընտանիքի մասին. «Այն ժամանակ Կիև քաղաքում կար ոմն բժիշկ, աղդուծյամբ և հավատով հայ..., որի նմանը չկար...»⁹⁸: Այդ բժիշկը բուժում էր Չեռնիդովում հիվանդացած իշխան Վլադիմիր Մոնոմախին (1113-1125): Կիևում ապրում էին, «այդ ընտանիքի հավատալիցները»⁹⁹: Կիևում կար Հայոց թաղամաս, ուր սիրում էր հաճախել կուսակրոն ոմն Ֆեոդոսի, «որպեսզի վիճի Հայերի հեռ հավատքի հարցերով»¹⁰⁰:

Գրավոր սպրիտներում պահպանված մի շարք վկայությունների հիման վրա Լ. Ա. Խաչիկյանը հավաստում է Մ. Տիխոմիրովի այն հեռավորությունը, ըստ որի «Կիևում եղել է լիակազմ հայ-

⁹⁸ Լ. Ա. Խաչիկյան, Հայերը Ռիմ Մոսկվայում..., էջ 43: Տե՛ս Գալս՝ Նոր Գյուրթեր Կիևի Ռիմ հայկական գաղութի մասին, «Ուկրաինական և հայ ժողովուրդների կապերն ու րարեկամությունը» գիտական նստաշրջանի Գյուրթերի ժողովածու, Երևան, 1961, էջ 110-111 (ոռու.):

⁹⁹ Լ. Ա. Խաչիկյան, Հայերը Ռիմ Մոսկվայում... էջ 43: Հմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Древняя Русь и Армения. "Сборник трудов Института языка АН Арм. ССР", 1946, с 22.

¹⁰⁰ Տե՛ս Изложение веры церкви Армянской. Историко-догматическое исследование И. Троицкого. СПб, 1875, с. 245-247.